բնակիչք վիճակիս են 6 կամ 7000 ոգիք, յորս Հայք երրորդ մասն և աւելի ևս։

121. Բ. ՊՕՌՉԱԼՈՒ գաւառ, մասն բուն Նահանգին Տփխեաց, 'ի հարաւոյ կայ Նորուն և Խրամ գետոյ, յարևելից Ախալքէլէքի, 'ի հիւսիսոյ Սամսէթայ և յարևմտից Խազախ գաւառի Նահանգին Գանձակայ. և ինքն մասն է Գուգարաց աշխարհի, ունի բնակիչս 30.000 կամ աւելի։ Ի հիւսիսակողմն արևմտից գաւառին առ ակամբք Բցիա կամ Խրամ գետոյ կայ ԹՐԻԱԼԷԹ վիճակ, որ է ԹՈԲԵՂՔ գաւառ լեռնախիտ. յորում Սմբատ Բիւրատեան զօրավար Ռուսաշխի Բի եհար զԱլիբս. գլխաւոր տեղի վիճակին է ԴԱԼԻՔԱ կամ Ծաղկոց բերդաւան բարձր։ — Զափամբք Խրամայ և Աւլէր գետոյ (որ 'ի Նորին հիւսիսոյ ընթանայ, և յարևելեան հարաւային ծայր գաւառին խառնին երկոքեան ևս 'ի Կուր), կան վիճակքն ԱԼԿԷԹԻԽԵՒ և ԽՐԱՄԻ, 'ի հնումն ՄԱՆԳԼԵԱՑՔՈՐ և ՊԱՐՈՒԱՐ? գաւառաց վիճակեալք, որք ձգէին մինչև 'ի Կուր և 'ի Տփխիս, և վաղ ուրեմն նուաճեցան ընդ ձեռամբ Վրաց. նշանաւոր տեղի է Մանկի աւերակ, այլ կանգուն ունելով զհին եկեղեցին զշինեալն առ Կոստանդիանոսիւ և Նորոգեալ 'ի յետնոց և եպիսկոպոսանիստ լեալ. առ երի կառուցեալ և Նոր Մանկի, ամարանոց և զօրանիստ Ռուսաց։ Յարևմտակողմն՝ յելից Լիովա լերանց որ անջրպետեն ընդ Թռեղս, յանկեան գետոյն Խրամայ և վտակի միոյ՝ կան աւերակք ՕՐԲԵԹԻ կամ ՀԱՄՐՈՑԼՏԻ բերդի (որ Թարգմանի Երեք-Նետ) հայրենի Ժառանգութիւն Ուրպելեան տոհմի եկելոյ 'ի Ճենաց յաւուրս հարբսուութեան Հայկազանց. բաղում շինուածոց և քարակերտ տանց են անդ մնացուածք և եկեղեցեաց Հայոց. 'ի ԺԵ դարու Լէնկթիմուր և Ճիհանշահ աւերեցին զբերդս զայս։ Հանդէպ Նորա և գետոյն կանգնեալ է Հայոց զՆորն Շամբոյլաբ գեղ և բնակեալ յ'30 տանց։ — Ի հարաւոյ Թռեղոյց և Լեաքվա լերանց և 'ի մտից Պօռչալուայ կան փոքր վիճակքն ՍՓՈՒՏԻՐԷԹ և ԱՊՈՑ կամ ԳԱՑՓՈՒԼԻ, որոյ լերինք անջրպետեն ընդ Ախալքէլէք և ընդ Պօռչալու գաւառ։

122. Բնիկ վիճակն ՊՕՌՉԱԼՈՒ տարածանի զհարաւով գաւառին 'ի հիւսիսոյ Տաշրայ, և է հին երկիրն ԴՄԱՆԵԱՑ և ԲՈՂՆՈՓՈՐՈՅ, միջասահման ընդ Տաշիրս ունելով զԼէռլեր լերինս, յորում պղնձահանք են անուանիք, Ժառանգութիւն Արղութեան տոհմի յԱԳԳ դարէ հետէ, և կարկեհան քար, վասն որոյ և Լէռ-Լեր կոչին լերինքն. ընդ որս են և անցք Ճանապարհի ԱՌԱՔԱԶԵՈՅ-ի տեղւոջ 5460' բարձու։ Բաղում գեղք են 'ի վիճակիս մեծի, այլ գլխաւորն Պօռչալու կամ Տէպէպա որ է Զորոյ-գեղ ըստ հնոց, խաղայ յարևելս 'ի Սամսէթայ եկեալ. և խառնեալ ընդ Խրամայ Թափի 'ի Կուր։ Յարևմտակողմն յելից Շինպոր լերին առ Մաշավերայ կամ Փոքր Խրամ գետով կայ Դմանի գիւղ, որ է հին ՔԱՂԱՔԱՆ ԴՄԱՆԵԱՑ, որոյ կան մնացուածք սակաւ։ Իսկ Բոնդի կայ յարևելից առ Բոլոտաբրի գետակաւ 'ի հարաւոյ Խրամայ. առ որով կան հին եկեղեցիք, և 50 տուն Հայոց։ Ի հիւսիսոյ Նորա յանին Մաշավերայ կայ Քարաբէնինքիւ գեղ դերմանացի գաղթականի 120 տամբք։ — Ընդ մէջ Բոլոտաբրի և Պօռչալու գետոց խաղայ Շոլավերի վտակ և առ նովաւ կայ ՀՈՒԼԱՎԵՐ քաղաքաւան Պօռչալու վիճակի, 500 տամբք, յորս 400 Հայոց են, որոց է առընթեր և գեղ մի Փոքր Շուլավեր կոչեցեալ։

123. Արևելեան կամ աջակողմն Պօռչալու գետոյ ցելս սահմանաց գաւառին և անդր ևս՝ 'ի հնումն կոչեր ՁՈՐՈՑԳԵՏՔ ևս և ՍԵՒՈՐԴԵԱՑ ՁՈՐ կամ ԱՀԽՈՐՀ, վասն ափափայ խորաձորոց ընդ որս ընթանայ գետն, իսկ Սեաւ՝ վասն Սեւկոյ նախահօր բնակչաց կողմանն, որ մասն է Գուգարաց, այսինքն ՁՈՐՈՓՈՐ, ԾՈՌՈՓՈՐ, ԿՈՂԲՈՓՈՐ գաւառք Նորին, որ մասամբ անկանին և յայն կողմն գաւառիս 'ի խազախ վիճակ։ Անուանի եղև յաւուրս Բագրատունեաց, և զկնի ցՃԳ դար՝ հռչակաւոր վանորայիւքն Հաղբատ և Սանահին, որք յելից գետոյն 'ի քարափուտս ձորոյն կառուցեալք են առ մասնր գետակաւ, Ժամաւ հեռիք յերերաց. Սանահին 'ի մտից հարաւոյ կայ ընդարձակ և ամայի, շինեալ 'ի խոսրովանոյշ Թագուհւոյ Հայոց յամին 967. կանգուն ունելով զհոյակապ և բարձրագմբէթ եկեղեցին Ամենափրկիչ, և այլս մանուանս, և մասն մենաստանին, և գերեզմանք Թագաւորաց, իշխանաց և իմաստուն վարդապետաց։ Հաղբատ 'ի հիւսիսոյ արևելից կայ, զուգակից՝ շինութեանն Ժամանակաւ և յօրինուածով, և մեծագործ ևս քան զայն, Ս. Նշան տաճարաւ և բազում մատրամբք և գրատամբ և սենեկաք, համակ քարաշէն. յորվագոյնք ևս 'ի սմա ննջեն իշխանազունք և արք իմաստունք, ընդ որս և Սարկաւագ վարդապետ և Կորիկեան Թագաւորք։ Բաղում եկեղեցեաց և վանորէից մնացուածք գոն և 'ի սահմանս սոցա, և 'ի համարէն գաւառին Զորոգետոյ, նշանակք բարեպաշտութեան և մեծագործութեան արքայական շառաւիղաց Բագրատունի տանն Հայոց և Վրաց, և իշխանաց յարեցելոց 'ի նոսա. յորոց մի է և Աւագ կամուրջն 'ի Թիկանց Սանահնի 'ի վերայ Զորոյ գետոյն, արկեալ 'ի Նանայ Թագուհւոյ քեռէ Զաքարէի և Իւանեայ, որ անխախուտ կայ ցայսօր գեղեցիկ արձանագրաւն, որ և մահարձան է յիշատակի վաղամեռիկ ամուսնոյ իւրոյ Աբասայ արքայի Թագաւորելոյ 'ի Տաւուշ (161)։ Կամուրջ մի ևս վերհագոյն և հռչակաւոր ընդ ամենայն տունն Վրաց՝ 'ի ծայրս գաւառիս կայ առ խառնրդոլքն Խրամայ 'ի Կուր, այն է Կամրջ Կամուրջ՝ զի յաղելեալ Թրծելոյ է, կամ Կարաչ-Կամուրջ, որպէս կոչեն Թաթարք Սինանքէօփրիւ, զի սակաւ ինչ աւերածս ունի արդ, յետ քակման հնոյն նոր սա շինեալ յամին 1647 'ի Ռոստոմայ Վրաց արքայէ. 400' երկայն և 30' լայն։ Ցայն կողմն Կարմիր կամրջոյն կան աւերակք ԽՈՒՆԱՆ քաղաքի զոր ասեն կառուցեալ Քարթլաւսի եղբօր Հայկայ, և Գէր-Գուլէ կոչի արդ 'ի Թուրքաց վասն բերդին. և է ըստ իս ՀՈՒՆԱՆԱԿԵՐՏՆ քաղաք 'ի ծայրս սահմանակցութեան Հայոց և Վրաց և Աղուանից։ — Միւս ևս բերդ անուանի Ագճա-գալէ 'ի Թուրքաց և Թէրդի-ոյիէ 'ի Վրաց կոչեցեալ՝ կայ յարևմտից մեծի կամրջոյն հեռի հինգ ժամաւ կամ աւելի, և անդ նստի կողմնակալ Պօռչալուայ։